ՀՏԴ 32 (479.243) *Քաղաքագիտություն*

ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ - Արցախի Պետական Համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն, բ.գ.թ., դոցենտ, hrayr.pashayan@mail.ru
ԼԻԱՆԱ ԲԱԼԱՅԱՆ - Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, balayan-lili@mail.ru
ԻՐԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ - ԱՀ ԳՆ ՍԱՊԾ աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ – գլխավոր իրավաբան, irina-sargisyan@mail.ru

ՀՐԱԴԱԴԱՐԻ ՌԵԺԻՄԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

Грайр Пашаян, Лиана Балаян, Ирина Саргсян

ТРЕХСТОРОННЕЕ ОБЯЗАТЕЛЬСТВО УКРЕПЛЕНИЯ РЕЖИМА ПО ПРЕКРАЩЕНИЮ ОГНЯ И РАССЛЕДОВАНИЯ ПРОИСШЕСТВИЙ В ПРОЦЕССЕ КАРАБАХСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ

В статье – в контексте последних дипломатических шагов по урегулированию карабахского противостояния проанализирован документ, предъявленный в феврале 1995г. от имени сопредседательства конференции ОБСЕ **“Предложение Посредников президенту Азербайджана Г. Алиеву о принятии трехстороннего обязательства по укрепления режима прекращения огня”.** Показывается, что официальный Баку соответственно пунктам указанного документа, с целью укрепления режима прекращения огня в трехстороннем формате взяло на себя международно-правовое обязательство внедрения механизма расследования происшествий.

Ключевые слова: *Карабахское противостояние, трехстороннее обязательство, укрепление режима прекращения огня, расследование происшествий, международное право.*

Hrayr Pashayan, Liana Balayan, Irina Sargsyan

TRIPARTITE COMMITMENT TO STRENGTHENING THE CEASEFIRE REGIME AND INVESTIGATING INCIDENTS IN THE PROCESS OF THE KARABAKH SETTLEMENT

In the article - in the context of the latest diplomatic steps to resolve the Karabakh conflict, the document presented in February 1995 was analyzed. on behalf of the co-chairmanship of the OSCE conference "Proposal of Mediators to President of Azerbaijan G. Aliyev on the adoption of a trilateral commitment to a ceasefire." It is shown that official Baku, in accordance with the paragraphs of the document, aimed at strengthening the ceasefire in the format of a tripartite commitment, assumed the international legal obligation to implement the mechanism for investigating the incidents

Key words: *Karabakh confrontation, tripartite commitment, strengthening the ceasefire, investigation of incidents, international law.*

Ղարաբաղյան կարգավորման գործընթացում արձանագրված շուրջ 16 ամսվա ընդմիջումից հետո՝ 2017 թվականի հոկտեմբեր 16-ին կայացավ ՀՀ և ԱՀ նախագահների հերթական հանդիպումը: Դրան հետևեց ԵԱՀԿ նախարարական խորհրդի ընդունած հայտարարությունը, որում գոհունակություն հայտնելով կառուցողական մթնոլորտում անցած հանդիպման վերաբերյալ, նշվում էր. «*Նախագահները համաձայնեցին միջոցներ ձեռնարկել բանակցային գործընթացն ակտիվացնելու ուղղությամբ և հավելյալ քայլեր ձեռնարկել՝ նվազեցնելու լարվածությունը շփման*

գծում»[1]*:* Կարևորելով նախագահների հանդիպումը բանակցային գործընթացի ակտիվացման համար պայմանների ստեղծման տեսանկյունից, Արցախի ԱԳՆ տարածած հայտարարության մեջ նշվում էր. *«Համոզված ենք, որ բանակցային գործընթացի առաջմղման հիմքերից մեկն է 1994 և 1995թթ. համաձայնագրերի անշեղ պահպանումը, ինչպես նաև նախկինում ձեռք բերված համաձայնությունների իրագործումը, որոնք, մասնավորապես, վերաբերում են միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրմանը և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի աշխատակազմի ընդլայնմանն ու դիտարկման կարողությունների ավելացմանը»*[2]:

Հավատարիմ մնալով տարիներով թրծված ապակառուցողական ավանդույթներին և կոպտորեն խախտելով նախորեին ձեռքբերված լարվածության թուլացմանն ուղղված պայմանավորվածությունը, ադրբեջանական կողմը հանդիպմանը հաջորդող օրերին հայ դիրքապահների ուղղությամբ կիրառեց տարբեր, այդ թվում՝ խոշոր տրամաչափի զինատեսակներ:[3] Հրադադարի ռեժիմի խախտմանը զուգահեռ, պաշտոնական Բաքուն անցավ տեղեկատվական ձեռնածություններին: Նախ՝ Ի. Ալիևի օգնական Նովրուզ Մամեդովի[4], այնուհետև արտգործնախարարի մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունները խախտելու մեջ մեղադրեցին հայկական կողմին[5]: Մինչդեռ հայտնի է, որ ինչպես 2016 թվականի Վիեննայի[6] ու Սանկտ Պետերբուրգի[7], և 2017-ի Ժնեվյան հանդիպումներից հետո, այնպես էլ դրանից տարիներ առաջ, ադրբեջանական կողմը տարբեր մանիպուլացիոն հնարքներով փորձում է խույս տալ ձեռք բերված պայմանավորվածությունները կատարելուց: Հակամարտության պատմությունը վկայում է, որ համաձայնագրերը խախտելը բնորոշ է Բաքվի գործելավոճին[8]: Դրանցով ադրբեջանական կողմը փորձում է *«տարբեր միջազգային հարթակներում ոչ միայն խեղաթյուրել բանակցային գործընթացի էությունը, այլև՝ հակամարտության բնույթը, չխորշելով ապակողմնորոշել միջազգային հանրությանը՝ ներկայացնելով հակամարտության հետևանքները որպես դրա պատճառներ»*[9]*:*

Թե ինչու մինչ օրս հնարավոր չի եղել առաջընթաց արձանագրել խաղաղ բանակցային գործընթացում, և որն է դրա իրական պատճառը, լավագույնս ձևակերպել է Է. Նալբանդյանը՝ ներկայացնելով կոնկրետ ինը հիմնավորում[10]:

Իրականությունը փաստաթղթերում ամրագրված փաստարկներով ներկայացնելու համար վերլուծենք սեփական ժողովրդի կուռք հռչակված Հ. Ալիևի կողմից թույլատրված և պաշտպանության նախարարի կողմից հաստատված **«Միջնորդների առաջարկությունը**

---

* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

[1] Joint Statement by the Foreign Ministers of Armenia and Azerbaijan and the Co-Chairs of the OSCE Minsk Group, Geneva, Switzerland 16 October 2017, http://www.osce.org/minsk-group/350091

[2] Արցախի Հանրապետության ԱԳՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության մեկնաբանություն http://www.nkr.am/hy/news/2016-05-17/841/

[3] Հոկտեմբերի 19-ին՝ նախագահների հանդիպումից երկու օր անց, հակառակորդի կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել Պաշտպանության բանակի զինծառայողներից մեկը: Այնուհետև հակառակորդը կիրառել է կառավարվող «Սպայկ» և այլ տիպի հոթիոներ: Տես՝ nkrmil.am/news/

[4] Новруз Мамедов: Серж Саргсян считает честью сорвать достигнутую во время переговоров договоренность. https://www.trend.az/azerbaijan/karabakh/2809010.html

[5] Эльмар Мамедъяров: «Безответственный выход президента Армении за рамки заявления неправилен» http://azeritoday.com/archives/73645

[6] Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, Vienna, 16 May 2016 http://www.osce.org/mg/240316

[7] OSCE Chairperson Steinmeier meets with Minsk Group co-chairs, discusses results of St. Petersburg summit of Presidents, http://www.osce.org/cio/248281

[8] Այս մասին առավել մանրամասն տես՝ Փաշայան Հ., Պատմության քաղաքականացումը հակամարտությունների կարգավորման գործընթացում /ԼՂՀ օրինակով/, Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու 4, Եր., 2013, էջ 324-330:

[9] Նալբանդյան Է., Տեսանելի՞ է արդյոք կարգավորումը, http://www.politiqueinternationale.com/revue/article.php?id_revue=146&id=1357&content=synopsis

[10] Տես՝ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի ելույթը ԵԱՀԿ մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի 24-րդ հանդիպմանը, 07.12.2017թ., http://www.mfa.am

Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևին հրադադարի ամրապնդմանն ուղղված եռակողմ պարտավորվածություն ստանձնելու» փաստաթուղթը[1]:

Իհարկե, մինչ այդ ևս նմանատիպ պայմանավորվածություններ են եղել, որոնք նույնպես խախտվել են Ադրբեջանի կողմից: Մասնավորապես, 1994 թվականի մայիսին Ստեփանակերտը, Բաքուն և Երևանը ստորագրեցին ռազմական գործողությունները լրիվությամբ դադարեցնելու[2] և ղարաբաղյան հակամարտության կարգավորման մասին եռակողմ համաձայնագիր[3]: Հրադադարի պահպանման և ամրապնդման տեսանկյունից անհրաժեշտ է հիշատակել 1994թ. հուլիսի 27-ը, երբ Կողմերը հայտնեցին իրենց պատրաստակամությունը պահպանել մայիսին հաստատված հրադադարը[4]:

Եթե նշված փաստաթղթերում շեշտն առավելապես դրված էր հրադադարի ռեժիմի պահպանման և այլ ոչ պակաս կարևորության հարցերի վրա, ապա 1995թ. փետրվարյան համաձայնագրով ամրագրվեցին հատկապես հրադադարի ամրապնդման նպատակով միջադեպերի հետաքննությանն առնչվող մեխանիզմները: Դրանք ներկայումս ընթացող բանակցությունների առանցքային տարն են հանդիսանում, և ինչպես տարիների փորձն է վկայում, առանց այդպիսի մեխանիզմների ամրագրման հնարավոր չէ և անհնար կլինի նաև հետագա դիվանագիտական քայլերի իրականացումն ու հիմնախնդրի կարգավորումն առհասարակ:

Նախքան փաստաթղթի բովանդակությանն անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել՝ իրավական ինչպիսի նշանակություն ունի համաձայնագիրը, արդյո՞ք միջազգային իրավունքի համաձայն հակամարտության կարգավորման գործընթացում ադրբեջանական կողմը պարտավոր է կատարել նշված համաձայնագրով ստանձնած պարտավորվածությունները:

Ինչպես հայտնի է, արդի աշխարհում միջազգային իրավունքի գերակայության ընդունումը միջպետական հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունքն է: Իսկ դրա հիմնական աղբյուրը պետությունների միջև փոխհամաձայնությամբ կնքված պայմանագրերն են: Միջազգային քաղաքականության փորձից ելնելով մշակվել և համընդհանուր ճանաչում են գտել պետությունների փոխհարաբերությունները կարգավորող այնպիսի ձևեր, ինչպիսիք են պայմանագիրը, համաձայնագիրը, հայտարարությունը, հրովարտակը, կոնվենցիան, պակտը, դաշնագիրը[5]: Ընդ որում՝ էթնոքաղաքական հակամարտությունը հանդիսանալով միջազգային կարգավորման առարկա, միջազգային իրավունքի նորմերը գերակայություն են ստանում ազգային օրենսդրության նկատմամբ: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հակամարտության լուծման ցանկացած մեխանիզմի ընտրության ժամանակ այն պետք է ունենա իրավական հիմնավորում և տեղավորվի միջազգային իրավունքի շրջանակներում[6]: Այս առումով առաջնային են ՄԱԿ-ի՝ միջազգային խաղաղության և անվտանգության համար պատասխանատու կառույցի կանոնադրությամբ սահմանված դրույթները: Հոդված 1-ով՝ Կազմակերպությունը և նրա անդամները, պետք է գործեն հետամուտ լինելով՝ «*պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և*

[1] 1992-1996թթ. ռուսական միջնորդական առաքելության ղեկավար, Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավորման հարցով ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովի անձնական կայքէջ http://vn.kazimirov.ru/doc12.htm.

[2] Տես՝ Соглашение противоборствующих сторон-Азербайджана, Армении и Нагорного Карабаха о полном прекращении военных действий, Архив МИД НКР, папка № 10, СБСЕ 1994г.

[3] Այդ մասին մանրամասն տես՝ Հ. Փաշայան, Լ. Բալայան, «Ղարաբաղյան հակամարտությունը 1994թ. հրադադարի և 2016թ. ապրիլյան պատերազմի համատեքստում», «21-րդ դար», թիվ 4 (68), 2016, էջ 40-54

[4] Архив МИД НКР, папка № 10, СБСЕ 1994г.

[5] Քաղաքական ու իրավական փաստարկների ներքին կապի և Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաստարկների քաղաքականացման դրսևորումների մասին մանրամասն տես՝ Փաշայան Հ., Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում: Մաս առաջին, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2016 թ., էջ 25-36:

[6] Մանրամասն տես՝ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Եր., Տիգրան Մեծ, 2008, 340 էջ:

միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը»[1]*:*

Բացի ՄԱԿ-ի կանոնադրությունում ամրագրված դրույթներից, կնքված պայմանագրերի հարգումն ուղղակիորեն ամրագրված է միջազգային անվտանգության և համագործակցության համար պատասխանատու մեկ այլ կառույցի՝ ԵԱՀԿ-ի կանոնադրությունում: Մասնակից պետությունների միջև հարաբերությունները ղեկավարող Հելսինկիի եզրափակիչ ակտի տասը կարևորագույն սկզբունքներից մեկով հռչակված է. «*Մասնակից պետությունները բարեխղճորեն կկատարեն միջազգային իրավունքով ստանձնած իրենց պարտավորությունները, ինչպես միջազգային իրավունքի հանրաճանաչսկզբունքներից ու նորմերից բխող պարտավորությունները, այնպես էլ միջազգային իրավունքին համապատասխանող այն պայմանագրերից կամ այլ համաձայնագրերից բխող պարտավորությունները, որոնց մասնակից են նրանք»*[2]*:* Ճիշտ է, միջազգային իրավունքը դեռևս չունի կոնկրետ իրավական մեխանիզմներ՝ կողմերից մեկի պայմանավորվածությունները չկատարելու դեպքում դրանք պարտադրելու համար, այդուհանդերձ, պայմանագրի ստորագրումը ինչպես իրավաբանական այնպես էլ քաղաքական նշանակությունը ունի: *«Ստորագրումից հետո իրավաբանական ուժ են ստանում այդ պայմանագրի վավերացման, ընդունման, դրան միանալու մասին դրույթները»*[3]: Այս տեսանկյունից, միջազգային պայմանագրերի իրավունքի հիմնական սկզբունքը պայմանագրերից ծագող միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքն է՝ «pacta sunt servanda»: *«Այն նաև պատկանում է «jus cogens» բնույթի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների թվին, և դրանից շեղումն անթույլատրելի է միջազգային իրավունքի սուբյեկտների հարաբերություններում»*[4]: Բոլոր դեպքերում պետք է շեշտել, որ անդամակցելով ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին կամ այլ միջազգային կառույցի, յուրաքանչյուր պետություն ինքնըստինքյան համաձայնվում է կատարել ստանձնած պարտավորվածությունները: Հետևաբար, հայկական կողմերը իրավունք ունեն, կարող են և պետք է պահանջեն որպեսզի պաշտոնական Բաքուն կատարի Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ստանձնած պարտավորվածությունները, մանավանդ, որ 2016-ին Վիեննայում կայացած հանդիպմանը հերթական անգամ համաձայնվել է պահպանել 1994-1995 թթ. հրադադարի մասին համաձայնագրերը[5]: Վերջին անգամ ադրբեջանական կողմը դա արել է 2018 թվականի հունվարի 18-ին Կրակովում տեղի ունեցած հանդիպմանը[6]: Իսկ դա նշանակում է, որ նշված եռակողմ համաձայնագիրը չի կորցրել իրավաքաղաքական արդիականությունը:

Նախքան բուն փաստաթղթի վերլուծությանն անցնելը անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ փաստարկումները.

1. Փաստաթուղթը, ինչպես մատնանշված է, հասցեագրված է Հ. Ալիևին: Կարծում ենք պատճառն այն է, որ դեռևս այն ժամանակ էլ ակնհայտ էր, որ ադրբեջանական կողմն է պայմանավորվածությունները խախտողը: Հետևաբար, անիմաստ կլիներ առանց նրա համաձայնությունը ստանալու դիմել հակամարտող մյուս կողմերին: Այսինքն՝ դա է նաև պատճառը, որ հանրությանը ներկայացված փաստաթղթի տեքստում շարադրված է միայն Հ. Ալիևին ուղղված առաջարկություններն ու պաշտոնական Բաքվի, ի դեմս պաշտպանության նախարար Մ. Մամեդովի հաստատած՝ «*Ադրբեջանի համաձայնությունը լրիվ ծավալով ստանձնելու Միջնորդի կողմից 1995 թվականի փետրվարի 3-ին շարադրած պարտավորությունները»:* Իսկ ահա մյուս կողմերին ուղղված նույնաբովանդակ նամակների ու նրանց պատասխանների մասին տեղեկատվությունը Միջնորդը փաստաթղթում ներկայացրել է ծանոթագրության ձևով:

---

[1] Charter of the United Nations-http://www.un.org/aboutun/charter/index.html.

[2] Conferense on security and Co-operation in Europe. Final Act-http://www.osce.org/documents/cs/1975/08/4044_en.pdf

[3] Քոչարյան Վ., Միջազգային իրավունք: ՈՒսումնական ձեռնարկ, Եր., 2002, էջ 108-109

[4] Նույն տեղում, էջ 113

[5] Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, Vienna, 16 May 2016 http://www.osce.org/mg/240316

[6] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, http://www.osce.org/minsk-group/367121, Krakow, 18 January 2018

2. Փաստաթղթում ամրագրված երկրորդ կարևոր փաստարկումն առնչվում է նրա ձևաչափին: Այսինքն՝ փաստաթղթում մեկ անգամ ևս ամրագրված է, որ ի տարբերություն ներկայիս խեղաթյուրված բանակցությունների ձևաչափի, հակամարտությունն ունի երեք կողմ: Չնայած 1997 թվականից հետո պաշտոնական Բաքվի ջանքերով ղարաբաղյան կողմը դուրս մղվեց անմիջական բանակցություններից, այդուհանդերձ, հետագայում մի քանի անգամ, այդ թվում նաև 2016-2017թթ. նախագահների մակարդակով տեղի ունեցած հանդիպումների ընթացքում ադրբեջանական կողմը ստիպված էր հանձն առնել կատարելու 1994-1995թթ. ստանձնած պարտավորվածությունները, դրանով իսկ հաստատելով Արցախի բանակցային կողմ լինելու հանգամանքը:

3. Փաստաթղթի հիմնական նպատակը, ինչպես նշված է սկզբնամասում՝ «*1994թ. մայիսի 12-ին հակամարտության տարածաշրջանում կրակի դադարեցման ռեժիմի ամրապնդման և խաղաղ գործընթացի առաջխաղացման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելն է»:* Այդ նպատակով հակամարտող կողմերին առաջարկվել և վերջիններս էլ ստանձնել են փաստաթղթում ներկայացված եռակողմ պարտավորվածությունները:

4. Փաստաթղթի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված են այն քայլերը, որոնք կողմերը պարտավորվում են իրականացնել հրադադարի պահպանմանը սպառնացող միջադեպերի առաջացման դեպքում: Մասնավորապես նշված է. «*միջադեպի առաջացման դեպքում մյուս կողմին և Միջնորդին տեղեկացնելու համար հուսալի, ուղիղ և արտակարգ կապի հաստատման, միջադեպի բնույթի, ստույգ վայրի, ժամանակի, դրանց տարածումը կանխող միջոցառումների, փաստերի ստուգման և գրավոր կամ բանավոր տեղեկատվությունը փոխանցելու ժամանակացույցի մասին»:*

Անդրադառնալով միջադեպերի տարածումը կանխող գործողություններին, առաջին հոդվածի երրորդ պարբերությունում մասնավորապես նշված է, որ *եթե հնարավոր է, հաղորդվում է նաև շտապ միջոցներ ձեռնարկելու առաջարկություններ, տվյալ միջադեպի կանխման և ստատուս-քվոյի վերականգնման նպատակով:* Այսինքն՝ ստատուս-քվոյի խախտմանն ուղղված գործողությունները փաստաթղթով համարվել են անընդունելի և դա պարտավորվել են պահպանել կողմերը:

5. Փաստաթղթի 3-րդ և 10-րդ կետերը վերաբերում են տեղեկատվական ոլորտին: Ըստ 3-րդ կետի՝ *«Կողմերը համաձայն են, որ պաշտոնական աղբյուրները զանգվածային լրատվական միջոցներին միջադեպի մասին հաղորդագրություններ են տրամադրելու միայն մյուս Կողմի պատասխանը ստանալուց հետո, իսկ եթե նման տրամադրումը ուշանում է, ապա տվյալ հարցով մյուս Կողմին նախնական դիմելուց ոչ շուտ, քան 7 ժամ անց: Ընդ որում Կողմերը մամուլի համար արված հաղորդագրության մեջ պետք է օբյեկտիվորեն արտացոլեն մյուս կողմի պատասխանը»:* 10-րդ կետը նույնպես խիստ արդիականություն ունեցող և այժմ էլ լուծման կարոտ խնդիր է: Դրանով՝ «*Կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ այնպիսի հրապարակային հայտարարություններից, որոնք կարող են հանգեցնել հակամարտության սրմանը»:* Սակայն ներկայումս էլ ադրբեջանական կողմը շարունակում է միջազգային հանրությանն ապատեղեկատվություն մատուցել ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտ զորքերի շփման գծում տեղի ունեցող դեպքերի և ընդհանրապես հակամարտության էության վերաբերյալ:

6. 5-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված են այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն՝ *Կողմերի դիմումները, միջադեպի և ստեղծված իրավիճակի քննարկման, տեղում իրավիճակի ուսումնասիրության համար:* Նշվում էր, որ *անհրաժեշտության դեպքում՝ կողմերից մեկի միջնորդությամբ և մյուսի համաձայնությամբ կարող է ուղարկվել տեսուչների խառը խումբ, ներառյալ Միջնորդի ներկայացուցիչները, նշված հարցերը լուծելու համար*:

9-րդ կետում նշված է. «*կախված ծանրության աստիճանից՝ իրավիճակը Միջնորդի կողմից կարող է ներկայացվել քննության ԵԱՀԿ Մինսկի խմբի կամ ԵԱՀԿ Մշտական խորհուրդի նիստերին»:*

7. Բանակցությունների հետագա առաջընթացի և հիմնախնդրի վերջնական կարգավորման գործընթացում կարևորելով ստատուս-քվոյի պահպանումը, 8-րդ կետում հավելյալ անգամ շեշտադրում է կատարվում այս հարցին: *«Առանց սպասելու միջադեպի հետաքննության ավարտին, Կողմերը ստատուս-քվոյի վերականգնման նպատակով պարտավորվում են միջոցներ ձեռնարկել, թույլ չտալու իրավիճակի սրում, ընդ որում, առավելագույնս հաշվի առնելով Միջնորդի հնարավոր առաջարկությունները»:*

8. Փաստաթղթի Հավելվածում ներկայացված է ադրբեջանական կողմի՝ ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի Համանախագահությանն ուղղված պատասխանի տեքստը, ստորագրված Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովի կողմից՝ 1995 թվականի փետրվարի 4-ը թվագրմամբ: Դրանում նշված է. *«Հաստատում եմ Ադրբեջանի համաձայնությունը լրիվ ծավալով ստանձնելու Ձեր կողմից 1995 թվականի փետրվարի 3-ին շարադրած պարտավորությունները: Այդ պարտավորությունների ընդհանուր համաձայնության մասին Ձեր հաստատումը ստանալու դեպքում, տվյալ պայմանավորվածությունը համարելու ենք ուժի մեջ մտած 1995 թվականի փետրվարի 6-ից»*:

Փաստաթղթի Ծանոթագրությունում տեղեկացվում է, որ *1995 թվականի փետրվարի 3-ին նմանատիպ նամակներ ուղարկվել են ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին և Լեռնային Ղարաբաղի առաջնորդ՝ Ռ. Քոչարյանին, իսկ փետրվարի 4-ին, պատասխան նամակներ են ստացվել /վերոնշյալին համարժեք/ Հայաստանի պաշտպանության նախարար Ս. Սարգսյանից և Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար Ս. Բաբայանից:*

Այսպիսով, «Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևին ուղղված հրադադարի ամրապնդման եռակողմ պարտավորվածություն ստանձնելու միջնորդների առաջարկությունը» փաստաթղթի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ

1. Ադրբեջանական կողմը համաձայնել է լրիվ ծավալով ստանձնելու Միջնորդի կողմից 1995 թվականի փետրվարին՝ միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրման առաջարկություններին, որոնք ուղղված են հակամարտության տարածաշրջանում կրակի դադարեցման ռեժիմի ամրապնդմանն ու խաղաղ գործընթացի առաջխաղացման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը:

2. Չնայած 23 տարվա վաղեմությանը փաստաթուղթը չի կորցրել իրավազորությունն ու քաղաքական արդիականությունը: Դրա մասին է վկայում ոչ միայն այն փաստը, որ մեր օրերում ընթացող բանակցություններում հետաքննության մեխանիզմի ներդրման և հրադադարի ամրապնդման հարցերը շարունակում են առանցքային տեղ գրավել, այլև այն փաստը, որ ադրբեջանական կողմն է պարբերաբար պարտավորվում կատարել նշված համաձայնագրի դրույթները:

3. Փաստաթղթում ամրագրված կարևորագույն դրույթներից մեկն էլ կապված է հակամարտության ձևաչափի հետ: Հերթական անգամ ամրագրվել է, որ հակամարտող կողմերից մեկն էլ Լեռնային Ղարաբաղն է հանդիսանում, որի առաջնորդին էլ ուղարկվել էր համանման բովանդակության փաստաթուղթը: Իսկ ահա պաշտոնական Բաքվի պատասխանում նշված «Այդ պարտավորությունների ընդհանուր համաձայնության մասին Ձեր հաստատումը ստանալու դեպքում, տվյալ պայմանավորվածությունը համարելու ենք ուժի մեջ մտած» արտահայտությունը վկայում է, որ ադրբեջանական կողմը ոչ միայն Լեռնային Ղարաբաղին ընդունել է որպես բանակցային կողմ, այլև նրա կողմից համանման պարտավորությունների ստանձնումը դիտել է որպես փաստաթղթում ամրագրված դրույթների իրականացման նախապայման:

4. Ադրբեջանական կողմի հակահայկական քարոզչությանը հակադարձելու և հակամարտության կերպարը խեղաթյուրված ներկայացնելու փորձերը կասեցնելու համար հայկական կողմերը իրավունք ունեն և պետք է ուղիներ գտնեն ոչ միայն բանակցություններում, այլև տարբեր միջազգային հարթակներում պահանջել ադրբեջանից հարգել ու կատարել սեփական պարտավորվածությունները: